

Ա. ԵՐԵՎԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ԱԿԱДЕՄԻԿԱԿԱՆ ԹԱԴՐԱՆ

№ I.

Ա. ԼԻՍԻՑԵԱՆ

I.

# ՊԱՀՄԸՆՔ ՏԱՑԻԿԻ

Մենախոսութիւն

II.

# ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Կոմելիա երկու արարտածով



891.991
L-61

ԳԻՖԼԻՍ  
Ն. Աղանեանի, Պօլից. 7.  
1913

W 1012

"Թշոց" պատճեն  
30 MAY 2011

ՀՀԱ.ՍԿ.ԵՐ, ամսագրի ՄԱՆՈՒԿ.Ա.Ա.Խ. ԹԱՏՐՈՒ.

Արք. Պահաժողովը  
№ 1

891.99 Ա. 93-2

L-6P

Եր. Մայթեղ

Ա. ԼԻՍԻՑԵԱՆ

ԱՐ

I.


## ՊԱՀՄԸՆԴՑՈՅՑԻԿ

ՄԵՆԱՀԻՇՈՎԱԾԻՆ

II.

## ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Կոմերիտ երկու արարածով



Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Էլեկտրոնայ. Օր. Ե. Աղանեանի, Պոլից. 7  
1913

9775

03 MAY 2013

Համար այս տարիներ առաջ են մի յօդածի  
մէջ («Քաջ զինտըներ» պիեսի առաջին հրատար, ա-  
ռաջաբան, 1885 թ.) աշխատում էի մի առ մի քննել  
այն առարկութիւնները, որոնք առաջ էին բերում  
մի քանի մանկավարժներ՝ վնասակար համարելով  
մանկական ներկայացումները։ Ժամանակը ապա-  
ցուցեց թէ ինչ մ'եծ եւ կարեւոր նշանակութիւն ունի  
մանկական թատրոնը փոքրիկների դիտողութիւնը,  
ճաշակն եւ ինտելիգենտութիւնը զարգացնելու համար։  
Այժմ արդէն զրեթէ չեն լաւում թշնամական ծայներ  
նրա դէմ։

Իբրև «Հասկեր» մանկական ամսագրի հիմաս-  
դիր՝ և հէնց առաջին օրից պիտի ուշադրութիւն դարձ-  
նէի մանկական գրականութեան այս ճիշդի վրա։ Ես  
այն համոզմունքի էի որ մանկական պիեսը լոկ մի  
զարժալիք չէ, այլ լուրջ գրական գործ, որտեղ պի-  
տի պահպանած լինեն զեղարևեստի բոլոր պահանջ-  
ները, այդտեղ էլ պիտի որոնենք թէ ընատրութիւնների  
հասատարիմ՝ արտայայտութիւնը եւ թէ գործողու-  
թեան զարգացման հոգեբանական ճշմարտութիւնը։  
Այսպիսի հասկացողութեան սրդիւնք էին այն պիես-  
ները, որ հետզհետէ լրյա տեսան «Հասկեր»-ի մէջ։

Այդ սիէսները շատ յաճախ խաղացում՝ են այժմ  
մեր քոլոր դպրոցական եւ ընտանեկան բնմերի վրա:  
Մանուկների ցոյց տասձ ջերմ՝ ընդունելումինը թե-  
լաղրում՝ է ինծ առանձին գրքոյկներով լոյս ըն-  
ծայելու այդ գրածքները:

Այս մանկական կօմենիաներն ու վողվիները  
սրտանց նկրում եմ փոքրիկ դերակատարներին եւ  
հանդիսականներին:

Աս. Լիսիցեան

## ՊԱՇՄԸԸՑՈՑԻԿ

Մենախոսութիւն

Նէր Ռուզիկ Տէր Միքարեսնին

ՔՈՐՃՈՂ ԱՆՁԵՐ

Ռուզիկ—Վեց տարեկան աղջիկ:  
Մայրիկ:

ԹՈՒԶԻԿ (Ներս է մտնում սենեակը եւ տեսնում  
է տախտի վրա նստած իր տիկնիկը: Արագ մօտե-  
նում է նրան, առջեւը կանգնելով ծափը ծափին  
է տալիս եւ առում):

ԽԵՂ իմ Շուշանիկ, տանը մենակ մնացիր  
հա, քեզ զբոսնելու չը տարանք հա: Ճաշին ին-  
չու խելօք չէիր նստում, ինչու էիր շուռ ու մուռ  
գալիս, երբ քեզ կերակրում էի, ինչու: Բերանդ  
ինչու լաւ չէիր բաց անում, քեզ որ սուպ էի  
տալիս: Քեզ եմ հարցնում, ինչու: Ի՞նչ ես լսել:  
(Կարծես ականջ զնելով):

Ի-ինչ. Էլ չես անի, իսկի չես անի, իսկի:  
Էլ կերակուրը շորիդ չես թափի: Լաւ է, լաւ է,  
ներում եմ, ներում: Լաց մի լինի: Սրի մայրի-  
կիդ մօտ: (Իր ծեղըն է առնում տիկնիկը):

Երեսդ էս մրտեղ ես էսպէս կեղտոտել, այ  
աջ թուշդ: Փողոցի աղջիկ հօ չես: Արի, արի,

սրբեմ։ (Հանում՝ է գրպանից թաշկինակը եւ սրբում՝ է տիկնիկի երեսը):

Ահա հիմա բոլորովին ուրիշ աղջիկ ես։ (Խտում՝ է եւ ման է զալիս սենեակում)։ Մենք գնացինք պարտէզ։ Էնքան աղաներ կային էնտեղ, էնքան տղաներ։ Գիտես՝ Կատիկի մեծ տիկնիկը, էն շէկը, քեզ շատ բարով արաւ։ Ճշմարիտ։ Ասաւ. «Շուշանիկը ուր է...» Չուզեցի ասեմ որ շորերդ կեղտոտ էին և դրա համար չեկար։ Ասացի՝ «Տանն է»։ «Տանն Բնչ պիտի անի»։ Ասացի՝ «Երկի... Երկի գասերը պիտի սովորի»։ Զէ՞ որ գու գասերդ պիտի սովորես։ Արի նստիր, նստիր շուտով, ժամանակ է որ գասերդ սովորես։ (Խտում՝ է սեղանի առջեւ, տիկնիկը ծնկան վրա նստեցնում եւ մի գիրը է քաց անում)։

Դեհ, լաւ նստիր, մի կռացիր, այ էսպէս. գիրքը ձեռներով բռնիր։ Կարդաւ Ի՞նչ ես ասում, կարդալ դեռ չը գիտես։ Ամօթ քեզ համար։ Ահա էսպէս պէտք է կարդաս... Բայց ես էլ որ կարդալ դեռ չեմ սովորել, Բնչպէս անենք։

Որ էտպէս է, արի քեզ մի հեքիաթ պատմեմ։ Գիտես, մենք էնքան վազվեցինք, Էնքան խաղացինք պարտէզում։ Միայն շոգ էր, շատ շոգ։ Յետոյ նստեցինք ծառի տակ և նազուն սկսեց մի հեքիաթ պատմել։ Բայց դու էտ հեքիաթը չես հասկանայ, չէ։ Ես քեզ մի ուրիշ հեքիաթ կը պատմեմ։ (Խստեցնում՝ է աթոռի վրա, ինչն էլ նրա առջեւը չոքում եւ սկսում)։ Եղել է չի եղել, մի փայտէ գառ է եղել։

Այ էնպիսի մի գառ, ինչպիսին իմ եղբայր Արշակը ունի։ Էտ գառը էնքան էր ուտառում, էնքան, որ ողջ փոքր խոսով լցւեց... Ի՞նչ ես պոջներդ ուղցնում, իմ աննման, փայտէ գառի հեքիաթը չես հաւանում։ Բաս քեզ ի՞նչ հեքիաթ պատմեմ։ Հեքիաթ բոլորովին չես ուղցնում... Որ էտպէս է, արի մի երգ երգենք (բռնում՝ է տիկնիկի երկու ծեռքից, պտտում եւ բարձր երգում)։ Երկու փոքրիկ նապաստակ Հանգիստ խոս են կրծոտում... Հանգիստ խոս են կրծոտում... Վայ, մոռացայ, որ էն սենէակում մայրիկը հանգստանում է։ Զէ՞ որ նա շատ է յոգնել, Գիտես, ամբողջ դիշեր մեր Արշակը տնքում էր։ Դու հօ տեսար, էս առաւօտ մեզ մօտ բժիշկ եկաւ, ես բժշկին չեմ սիրում, չէ։ Շուշանիկ, ափսոս որ Արշակը հիւանդացել է և մեզ հետ չի կարող խաղալ (կանգնեցնում՝ է տիկնիկը սենեակի մէջտեղ, մի փոքր հեռանում եւ ասում)։

Ապա Բնչ անենք հիմա ես և գու. Երգել չի կարելի, վազվել չի կարելի։ Արի, պահմըտցիկ խաղանք։ Ուղնում ես։ (Վեր վեր թռչելով) Պահմըտցիկ, պահմըտցիկ։ Գեռ դու թաք կը կենաս, իսկ ես քեզ կը վիճարեմ, և յետոյ ես թաք կը կենամ և գու ինձ կը վիճարես, Լաւ։ (Խտում՝ է տիկնիկը)։

Բայց դու սրտեղ պիտի թաք կենաս։ Բարձի ետեւ. Ո՞չ, ո՞չ։ Էնտեղ քեզ իսկոյն կը գտնեմ։ Ուղնում ես՝ վառարանի մէջ։ Ի՞նչ եմ ասում. չէ՞ որ էնտեղ շորերդ բոլորովին կը կեղաստես։ Ա-ա,

դիտես, մի էնպիսի տեղ թաք կացիր, որ ոչոք, ոչնք քեզ չը կարողանայ գտնել: (Որուզիկը դէս ու դէն է նայում, արագ մօտենում է պահարանին եւ բաց է անում պահարանի դուռը):

Արի պահարանի մէջ թաք կացիր: Գիտես, երբ ես Արշակի հետ պահմըտցիկ եմ խաղում, միշտ պահարանումն եմ թաք կենում: Գլուխդ կը պահես շորերի մէջ, միայն ոտներդ կերեան: Այ էսպէս, էսպէս (կանգնեցնում է տիկնիկը պահարանի մի անկիմում), կախած շորերի տակ, երեսը պատին դարձրած, եւ դուռը վրա դնում: Մատը ժանելով շրթունքներին, ոտի պծեղների վրա կամացուկ հեռանում է):

Սու-սւ, սու-սւ (հեռանում է սենեակի հեռատը անկիմը, աչքերը ծեռներով ծածկում եւ մի փոքր ժամանակից յետոյ հարցնում է):

Ժամանակ է... (լոռվթիւն): Շուշանիկ, ժամանակ է: Այս: (Աչքերը բաց է անում, շուր է զայիս եւ շուրջը նայում):

Ո՞րտեղ ես: Ես քեզ ի՞նչպէս գտնեմ: Այ, այ, աթոռի ետևն ես: (Որոնում է): Ոչ, էստեղ չէ: Ո՞ւր պիտի գնացած լինի: Շուշանիկ, Շուշանիկ... Զայն չի հանում: Ի՞նչ սատանայ է, ի՞նչպէս է թաք կացել: (Վառարանի դոնակը բաց է անում): Էստեղ էլ չը կայ: Չը լինի թէ բարձի տակն է պահեւել: Ոչ, էստեղ էլ չէ: Ո՞ւփ, յոդ-նեցի գնարելով: Շուշանիկ, որտեղ ես, որտեղ, դուրս արի: (Լոռվթիւն): Ո՞րտեղ կարող է լինել համ: (Մտածում է): Չը լինի թէ պահարանն է

մտել: Ոչ, էստեղ ի՞նչպէս կը տեղաւորւէր. չէ որ լիքը շորեր են: Ապա մի տեսնեմ: (Բաց է անում՝ պահարանի դուռը, շօշափում է դեռ շորերը վերեւից): Զէ, էստեղ էլ չը կայ: (Կարծես յանկարծ դիպշելով տիկնիկին):

Ա՛, գտայ, գտայ, վերջապէս գտայ: (Դուրս է քաշում եւ սկսում է հետը պար զալ) Զէի իմանում, որ էտպէս խորամանկ ես: Տես, ի՞նչպէս է վրաս ծիծաղում: Սպասիր, սպասիր: Հիմա իմ հերթն է, հիմա դու աչքդ ծածկիր, իսկ ես թաք կը կենամ, աեսնեմ ի՞նչպէս ես ինձ գտնում: (Տանում է՝ տիկնիկը կանգնեցնում իր նախկին կանգնած տեղը):

Աչքերդ լաւ խփիր: Զեռներնվ, ձեռներնվ: Ոչ, էտպէս կը տեսնես. չեմ ուզում, չեմ խաղայ: Դու պէտք է աչքերդ թաշկինակով կապես: Այ, էսպէս (կապում է տիկնիկի աչքերը թաշկինակով եւ նրա գլուխը դէպի պատն է դարձնում):

Սու-սւ, սու-սւ, դու ինձ երբէք չես դանի, երբէք:

(Կամացուկ, ոտի պծեղների վրա հեռանում է, դէս ու դէն է նայում, յետոյ բաց անում պահարանը, այնտեղ թաք կենում եւ ետեւից դուռը ծածկում: Պահարանի միջից ծայնում է):

Ժամանակ է, ժամանակ է (լոռվթիւն), Շուշանիկ, ժամանակ է: (Աւելի երկար լոռվթիւն): Շուշանիկ, կու-կու, կուտի - կու-կու: (Շատ երկար լոռվթիւն, քնալթաթախ): Ժամանակ է: (Մի

փոքր ժամանակից պահարանի զուտը բացւում է եւ մէջը երեսում է Ռուզիկը նստած, մէջքով շուրջը ին ետևի պատին կը թնած, իսկ ոտնելը առաջ մեկնած, պահարանից դուրս։ Ռուզիկի զլովսը քարշ է ընկել, ընել է։ Մի երկու քովէից մտնում է մայրիկը։

### ՄԱՅՐԻԿ

Ռուզիկ, Ռուզիկ։ (Որոնում է աղջկան)։ Իմ աննման, ուր ես։ Զը լինի՞ թէ հարեանի մօտ է գնացել։ Առանց հաբնելու ուր պիտի գնար։ Ռուզիկ, Ռուզիկ։ (Յանկարծ նկատում է որ պահարանը բաց է, եւ մօտենում է պահարանին)։ Վա, աղջի, էսաեղ ես։ Քնել ես, բնչ է։

ԹՈՒԶԻԿ (Քնի միջից)

Շուշանիկ, չես գտնի, չէ։ ՄԱՅՐԻԿ (Հանելով աղջկան պահարանից եւ իտտելով նրան)։

Տիկնիկը չեմ, մայրիկդ եմ, մայրիկդ։ ԹՈՒԶԻԿ (Յանկարծ աչքերը լայն բաց է անուս)։

Հօ ինձ տիկնիկը չը գտամւ, մայրիկ, Շուշանիկը հօ ինձ չը գտամւ, էնպէս չէ, մայրիկ, հօ չը գտամւ։

ՄԱՅՐԻԿ (Ժիծաղում է)

Ես գտայ, ես։ ԹՈՒԶԻԿ (Մօր զիկից դուրս պրծնելով եւ վազելով տիկնիկի մօտ՝ չզբացնում է)։

Հէ, հէ, հէ, հօ չը կարողացար ինձ գտնել հօ չը կարողացար գտնել։ Հէ, հէ, հէ։

ԱՅ. ԼԻՍԻՑԵԱՆ

Վարար արքունիք



### ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Կոմեղիա երկու արարւածով

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Աննա—մօրաքոյր

Թագուշ—11 տարեկանուն

Ժամիկ—10 տարեկան

Լիլիկ—7 տարեկան

Մարիսմ—աղախին և խոհարարուհի

Տեսարանը ներկայացնում է կարգին կահաւորւած սենակ։ Մէջակեդ՝ սեղան և աթոռներ, ձախ կողմում՝ գրքակալ զբքերով, աջ կողմում՝ թափառ։

### ԱՐԱՐԻԱԺ ԱՓԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ I.

ԹԱԳՈՒԻՇ, ԺԱՆԻԿ, ԼԻԼԻԿ,

ԹԱԳՈՒԻՇ.

Այսպէս էլ անբախտութիւն։ Միշտ մէկը մեզ պիտի հսկի, միշտ մէկին պէտք է հնագանդւենք։

ԺԱՆԻԿ,

Կարծես թէ մենք միայն նրա համար ստեղծւած լինենք, որ մեծերը միշտ մեզ հրամայեն։

**Լիլիկ.** (շարունակ հանում՝ հազցնում՝ է իր  
տիկնիկը):

Մինչև անգամ իմ տիկնիկները այսքան հրա-  
մաններ չեն լսում, որքան ես:  
**ԹԱԳՈՒՇ.**

Որ միայն հայրիկին ու մայրիկին պէտք  
լինէր լսել, դեռ ոչինչ: Բայց բնակու ուրիշները  
պէտք է մեզ հսկեն:

**ԺԱՆԻԿ.**

Առանց այդ հսկողութեան էլ շատ լաւ կը  
դիմանայինք:

**Լիլիկ.**

Այն էլ բնչպէս:

**ԹԱԳՈՒՇ.**

Մայրիկը շատ լաւ կարող էր մեզ մի երկու  
օրով մենակ թողնել, մինչեւ Թիֆլիսից վերա-  
դառնալը:

**ԺԱՆԻԿ.**

Ի հարկէ:  
(Դուռը մ'ի քիչ քացում՝ է, մ'անում՝ է մ'օրա-  
քոյը. երեխանները նրան չեն նկատում. նա շեմ-  
քին կանգնած մնում է):

**Լիլիկ.**

Թէ չէ, մայրիկը մեզ համար կանչել է տւել  
Աննա մօրաքրոջը, ի՞նչ ացու է:

**ԺԱՆԻԿ. (հեղնօրէն).**

Որ մօրաքրոյը մեզ միշտ հրամայի թէ ինչ  
պիտի ուտենք, ինչ պիտի անենք, երբ պիտի  
դասերը սովորենք, երբ պիտի պառկենք:

**ԹԱԳՈՒՇ. (վրդովլած).**

Կարձես թէ մօրաքրոյը գիտինալիս լինի թէ  
մեր սիրաը բնչ է ուղում, կարձես թէ գիտե-  
նալիս լինի երբ է մեզ դուր գալիս խաղալ, երբ  
է մեր քունը տանում:

**ԺԱՆԻԿ. (հեղնօրէն).**

Դրա մասին ով է մտածում: Միայն այն  
են պահանջում, որ լսենք, լսենք ու լսենք:  
**Լիլիկ.**

Ոհ, հրամայել ես էլ հօ կարող եմ: Այդ ա-  
ւելի հեշտ է, քան թէ լսել:

**ԹԱԳՈՒՇ. (հրազեստ ձայնով)**

Ահ, երանի թէ յանկարծ մէկը տանէր ինձ  
մի այնպիսի աշխարհ, որտեղ երեխաններն են հրա-  
մայում, իսկ մեծերը ստիպւած են լսել:

**Լիլիկ. (հետաքըզըութեամբ).**

Միթէ այդպիսի աշխարհ կայ:

**ԺԱՆԻԿ.**

Ցաւն էլ հենց այդ է, որ չըկայ. բայց եթէ  
լինէր, եթէ լինէր, — ահ, բնչ լաւ կըլինէր: Այն  
ժամանակ ցոյց կըտայինք թէ մենք աւելի լաւ  
կարող ենք կառավարել, քան թէ մեծերը:  
(Աննա մօրաքրոյը աննկատելի կերպով դուքս է  
զնում):

**ԹԱԳՈՒՇ.**

Եհ, զրա մասին խօսել էլ չարժէ: Միայն  
սիրա է պղտորուում, երբ մտածում եմ, որ այդ-  
պէս չի կարող լինել:

**Լիլիկ.**

Իսկ ուր որ է վարժուհին դասի կըզայ: Ոհ,

դասերս գեռ չեմ արտագրել: (Հիլիկը առնում է տետրակը, նստում է սեղանի մօտ եւ սկսում է զըել):

### ԺԱՆԻԿ.

Իսկ ես անգիրս գեռ չեմ սովորել:  
ԹԱԳՈՒԻՇ.

Խնդիրը վճռում եմ, վճռում, գուրս չի գալիս (սեղանի շորջը նստած պարապում են. Լիլիկն ու Ժանիկը կէս ձայնով մրթմրթում են):

### ՏԵՍԱՐԱԿԻՆ Ա.

ՆՈՅՆԵՐԸ եհ Անել ՄՈՐԱՔՈՅՐԸ.

### ԱՆՆԱ. (Մանելով).

Երեխաներ, ես գեռ ձեզ ոչինչ չեմ ասել  
մայրիկի վերջին կարգադրութեան մասին:  
ԹԱԳՈՒԻՇ.

Ոհ, մօրաքոյր, ի՞նչ հարկաւոր է ասել: Առաջուց գիտենք թէ ի՞նչ կըլինի: Ամեն բանում լսեցէք Աննա մօրաքրոջը, վարժուհուն, Մարիամին...

### ԺԱՆԻԿ. (Թագուշի եղանակով)

Գէորգ ծառային, մեր մշակին, մի խօսքով՝  
բոլորին, բոլորին:

Լիլիկը (զլսով կըլինում է նրանց շարժումները):

### ԱՆՆԱ. (Ժպտալով).

Այս անգամ սխալել էք: Մայրիկը բոլորովին ուրիշ բան է կարգադրել:

### Լիլիկ.

Ես գիտեմ ի՞նչ... (Մեծերին նմանեցնելով):

Թող երեխաները աանից գուրս չըդնան, սաստիկ անձրև է գալիս, թող քաղցր բան չափանց շատ չուտեն, թող վաղ պառկեն քնեն:

ԹԱԳՈՒԻՇ եհ ԺԱՆԻԿ (ընդհանելով արագ)...

Թող լաւ սովորեն, աղմուկ չըհանեն, գժումին չանեն, թող... Ահ, գիտենք, բոլորը գիտենք:

### ԱՆՆԱ. (շատ հանգիստ).

Նորից սխալում էք: Բայց զուր գլխներդ միք ցաւացնի, միենոյն է՝ չէք իմանայ թէ ինչ պիտի ասեմ ձեզ: Բոլորովին թէ անսպասելի և թէ շատ ուրախալի բան: Ահա մայրիկն ինչ կարգագեց: Գիտէք որ մի քանի օրով հայրիկի հետ գնացել են Թիֆլիս, մինչեւ նրանց վերադառնալը... (կանգ է առնում եւ ժպտալով նայում է երեխաներին, որոնք շատ հետաքրքրուած են):

Լիլիկ. (Մօրաքրոջ վէշից քաշելով).

Ի՞նչ, ի՞նչ:

### ԱՆՆԱ.

Մինչեւ նրանց վերադառնալը ձեզ բոլորովին ազատ և ինքնագուխ է թողնում, առանց հսկողութեան:

ԵՐԵԽԱՆԵՐԸ (արագ).

Կատակ ես անում, մօրաքոյր:

### ԱՆՆԱ.

Բոլորովին ոչ: Այդ գեռ բոլորը չէ. մայրիկն ասաւ, որ տան ամբողջ կառավարութիւնն ու իշխանութիւնը ձեզ է յանձնում, դուք պիտի կարգադրութիւն անէք:

**Լիլիկ** (ընդհատում՝ է).

**Բայց** մեղ ոչ ոք չի լսի:  
ԱննԱ.

**Ընդհակառակը:** Արդէն ծառաներին և Գէորգին ասել եմ, որ եթէ մի բան հարկաւոր լինի, ձեզ դիմեն և ձեր կարգադրութիւնները խկոյն ճիշտ կատարեն:

**Լիլիկ.** (ծափ տալով եւսենեակում թոշկոտելով).

Ահ, ի՞նչ լաւ բան կըլինի, ի՞նչ լաւ բան: Բոլորպին ազատ կըլինենք: Ես խկոյն կըհրամայեմ, որ ինձ համար մոշի մուրաբով կարկանդակ պատրաստեն: Գնամ, Մարիամին հրամայեմ (ղուրս է վազում թոշկոտելով):

**ԺԱՆԻԿ.** (գոռոգ).

Այ թէ երեխայ է: Իսկ ես կըվերցնեմ հայրիկի հովանոցը և կերթամ մենակ զբօսնելու:

**ԹԱԳՈՒՇ** (արագ).

Ներողութիւն: Ես եմ ուզում վերցնել հայրիկի հովանոցը և գնալ ընկերուհուս մօս:

**ԺԱՆԻԿ** (քարկութեամբ).

Շատ հարկաւոր է որ գնաս: Կարող ես տանը մնալ: Իսկ ես ասացի, որ հովանոցը կըվերցնեմ, ու կըվերցնեմ:

**ԹԱԳՈՒՇ.**

Այն է, որ չեմ կարող: Մօրաքոյր, ժանիկը չըպէտք է հայրիկի հովանոցը վերցնի, այնպէս չէ: հայրիկը թոյլ չի տալիս վերցնել:

**ԱՆՆԱ.**

Ես այլևս ձայն չունեմ: Արէք, ինչպէս ուշ-

զում էք: Իսկ եթէ ինձ ասելու բան կունենաք, մայրիկի սենեակում կըլինեմ (ղուրս է զնում):

### ՏԵՍԱՐԱՆ III.

ԹԱԳՈՒՇ, ԺԱՆԻԿ, յետոյ Լիլիկ.

**ԹԱԳՈՒՇ** (վազում է ղէպի ղուրը).

Կերթամ, հովանոցը ես կըվերցնեմ:

**ԺԱՆԻԿ** (նրա ետելից վազելով):

Ես առաջինը ասացի, որ հովանոցն եմ վերցնելու:

**ԹԱԳՈՒՇ** (ծայնը բարձրացնելով):

Տեսնենք թէ ինչպէս ես հովանոցը վերցնելու:

**ԺԱՆԻԿ** (աւելի բարձր ծայնով).

Տեսնենք:

**ԹԱԳՈՒՇ.**

Ես քեզանից մեծ եմ:

**ԺԱՆԻԿ.**

Իսկ ես տղամարդ եմ:

**ԹԱԳՈՒՇ** (ծաղրելով):

Լաւ տղամարդ ես: Դեռ մարդավարի կարդալ էլ չըգիտես:

**ԺԱՆԻԿ.**

Քո բանը չէ: Թռղ ինձ. (աշխատում է ղէպի ղուրը անցնել, Թագուշը չի թողնում: Դուրը քացում է, ներս է վազում Լիլիկը շատ շփոթած: Թագուշն ու Ժանիկը ետ են ցատկում):

**Լիլիկ.** (հետալով).

Վարժուհին եկաւ:

**ԹԱԳՈՒՇ** (սարսափած).  
 Տէ՛ր Աստւած, դասս չեմ սովորել,  
 ԺԱՆԻԿ (նոյնպէս).  
**Անգիրս չըգիտեմ.**  
 Լիլիկ (ձեռները կոտրաելով).

Իսկ ես ոչինչ չըգիտեմ, ոչինչ: (Եսեխաները արագ վազում են դէպի սեղանը, կարգի են բերում զբքերը, տեսրակները: Լիլիկը արագ զրում է, ժանիկը բարձր ճայնով կրկնում է ոտանատրը, Թագուշը տեսրակի վրա կոացած հաշիւ է անում):

## ՏԵՍԱՐԱԿ Ա

ՆՈՅԵՆԵՐԸ եի ՄԱՐԻԱՄԸ:

**ՄԱՐԻԱՄ** (բարձր ճայնով, աշխատելով ծիծառը զսպել եւ ծանր խօսել):

Ներեցէք խնդրեմ. վարժուհին հարցնում է՝ կարսղ է արդեօք մտնել և պարապել:  
 (Եսեխաները տեսրակներն ու զբքերը թողնում են ու զարմացած իրար են նայում: Թագուշը առաջինն է ուշքի գալիս):

**ԹԱԳՈՒՇ** (աշխատում է խօսել սառն կերպով, մեծերին նմանեցնելով).  
 Ասա վարժուհուն, որ այսօր դաս չի լինի:  
 Լիլիկ (շտապով).

Էգուց էլ:

**ԺԱՆԻԿ** (շատ կոպիտ ճայնով).

Արձակում ենք վարժուհուն:

## ՄԱՐԻԱՄ.

Զեր կամքն է, ինչպէս կը հրամայէք (դուքս է զնում):  
 ԵՐԵԽԱՆԵՐԸ (միասին, թեթևացած սրտով).  
 Ա՛հ:

**ԺԱՆԻԿ.**

Ի՞նչ բախտաւորութիւն է հրամաններ տալ:  
 Լիլիկ.

Ահ, մեծ բախտաւորութիւն է: Կարող էք երեակայել թէ Մարիամը ինչպէս էր նայում, երբ ճաշի կարգագրութիւն էի անում:

## ԹԱԳՈՒՇ.

Ի՞նչ, դու ճաշի կարգագրութիւն էիր անում:  
 Լիլիկ (հպարտ).

Այո, արդէն պատւիրել եմ:  
 ԺԱՆԻԿ.

Տեսնենք թէ ինչ:  
 Լիլիկ (աշխայժ).

Ոհ, հրաշալի ճաշ: Առաջին տեսակը կը վնի սերկեիլի սպաս, երկրորդը՝ խնձորով տօլմա, երրորդը՝ կարկանդակ մոշի մուրաբով.

**ԹԱԳՈՒՇ** (բարկացած ընդհատում է).

Ոչ, էլ համբերելու բան չէ: Նախ և առաջ քեզ ովք էր թոյլ տալիս ճաշի կարգագրութիւն անես:

Լիլիկ.

Ներողութիւն: Աննա մօրաքոյլը ասաւ, որ մենք ինքներս կարող ենք պատւերներ առաջ:

## ԹԱԳՈՒՇ.

Բայց ոչ թէ դու:



*Լիլիկ.*

Բայց ինչու ոչ ես:  
ԺԱՆԻԿ (արհամարհանքով).

Որովհետեւ դու գեռ լակոտ ես:  
Լիլիկ.

Օ, օ, զլուխդ շատ մեծ բան մի կարծիր,  
մի երեք տարով ինձանից մեծ ես, Եթէ այդպէս  
է, Մարիամի հետ համեմատած, դու աւելի մեծ  
լակոտ ես:

*ԺԱՆԻԿ.*

Եեզուդ կարճ պահիր:  
ԹԱԳՈՒՇ.

Հանգիստ, հանգիստ, միք կուիլ: Դեռ ձա-  
շի մասին պիտի խօսենք: Զէ՞ որ մրգեղէն շատ  
կըլինի:

*ԺԱՆԻԿ.*

Ի հարկէ:

*Լիլիկ.*

Բոլորովին ոչ: Ես միրգ շատ եմ սիրում և  
ուզում եմ մրգերից պատրաստած կերակուր-  
ներ ուտել:

*ԹԱԳՈՒՇ եհ ԺԱՆԻԿ.*

Բայց մենք չենք ուզում:  
Լիլիկ.

Իմ բանը չէ: Ես ուզում եմ ազատութիւն  
վայելել:

*ԹԱԳՈՒՇ.*

Լաւ ազատութիւն է, ուզում ես, որ մեզ  
էլ ստիպես մրգեղէն կերակուրներ ուտենք:

*Լիլիկ.*

Դուք էլ ձեզ համար մէկ մէկ բան պատ-  
փրեցէք:

*ԺԱՆԻԿ.*

Ճշմարիտ է ասում (կանչում է). Մարիամ,  
Մարիամ: Թող Մարիամը սրա համար մրգեղէ-  
նից պատրաստի, իսկ մեզ համար...

*ԹԱԳՈՒՇ (ընդհատելով).*

Հաւով փլաւ, վրան էլ սալորի մուլաբար:  
ԺԱՆԻԿ.

Աւելի լաւ է տապակած վասիկներ (մտնում  
է Մարիամը):

*ԹԱԳՈՒՇ.*

Այնքան ենք կերել տապակած վասիկներ:  
Թող հաւով փլաւ լինի:

*ԺԱՆԻԿ (նկատելով Մարիամին, կոպիտ ձայնով).*

Հա, եկար վերջապէս. շատ լաւ: Իմացիր,  
որ ձաշին կունենանք տապակած վասիկներ:  
ԹԱԳՈՒՇ (արագ).

Հաւով փլաւ:

*Լիլիկ (միաժամանակ).*

Կարկանդակ մոշի մուլութով:

*ՄԱՐԻԱՄ (ականջները վակելով).*

Ոչինչ չեմ հասկանում. այդպէս միք բդաւի:  
Լիլիկ.

Ուզում ենք, ու բզաւում: Այսօր ամեն  
բան անելու իրաւունք ունենք:

*ԹԱԳՈՒՇ (խիստ).*

Յո բանը չէ՝ մեզ նկատողութիւն անես:  
Աւելի լաւ է լսիր, ինչ ենք հրամայում:

**ՄՅՐԻԱՄ.**

Լսում եմ: Ուրեմն ճաշին կը լինեն տապակած վառիկներ, հաւով փլաւ, մուրաբով կարկանդակ:

**ԵՐԵԽԱՆԵՐԸ (միաժամանակ).**

**Լիլիկ.**

**ՄԵՐԿԱԲԻ սպաս:**

**ԺԱՆԻԿ.**

**Սպաս հարկաւոր չէ:**

**ԹԱԳՈՒԻՇ.**

**Պօմիդօրի սուպ:**

**Լիլիկ.**

**ՄԵՂՐՈՎ եաղլու:**

**ԹԱԳՈՒԻՇ.**

**ՄԵՂՐՈՎ իսաւիծ:**

**ՄՅՐԻԱՄ (գլուխը բռնելով).**

Խլացրիք: Այդպէս հօ ճաշը միայն ժամի վեցին պատրաստ կը լինի (զուրս է փախչում):  
Լիլիկ (ետեւից կանչում է).

**Զը մոռանաս մոշի մուրաբով կարկանդակը:**  
**ԹԱԳՈՒԻՇ.**

**ՄԵՂՐՈՎ իսաւիծը:**

**ԺԱՆԻԿ.**

**Եաղլուն:**

**ՏԵՍԱՐԱԿ.**

ՆՈՑՆԵՐԸ, ԱԽԱՆՑ ՄԱՐԻԱՄԻ

**Լիլիկ.**

Փառք Աստծու, ամեն մէկս իր սիրած բանը

կունենայ: ինչոր սիրան ուզում է, կռւափ, կը կտանայ:

**ԹԱԳՈՒԻՇ (ոժգոհովթեամբ).**

Այն, միայն թէ ճաշը վեցից առաջ պատրաստ չի լինի և Մարիամը կը մտածի թէ մենք հոյնիսկ ճաշ պատկրել չենք իմանում: Ճաշակում մենիկ.

Որ այդպէս էր, ինչու էիր հաւով փլաւ պահանջում:

**ԹԱԳՈՒԻՇ.**

Որովհեակ հաւով փլաւը քո տապակած վասիկներից լաւ է:

**ԺԱՆԻԿ.**

Նայելով թէ ում համար:

**ԹԱԳՈՒԻՇ (զրգուած).**

Ամեն մի կարգին մարդու համար:  
ԺԱՆԻԿ. (Վեր թռչելով եւ ցատկելով դէպի Թա-

գուշը).

Ի՞նչ, Այդ ուրեմն ես չեմ կարգին մարդ:

**Լիլիկ (նրանց մէջ ընկնելով):**

Ի՞նչ է ձեզ պատահել: Երբէք չէիք կուռւմ:  
Իսկ այսօր—պատութեան օրը...:

**ԺԱՆԻԿ (ամաշելով ետ է բաշում):**

**Թագուշն է միշտ...**

**ԹԱԳՈՒԻՇ (նոյնպէս).**

**Փանիկն է միշտ...**

**Լիլիկ.**

Ի՞նչ էք ժամանակ կորցնում: Աւելի լաւ է պատութիւնը վայելեցէք: Ես կերթամ կը հակըն-

ւեմ ու յետոյ կը զբօնեմ իմ արիկնիկիս հետ,  
(Առնում է տիկնիկը): Ի՞նչ է, իմ աչքիս լոյս,  
համաձայն ես (ղողը է զնում):

### ԹԱԳՈՒԻՇ.

Ես էլ կը հագնւեմ, կը վերցնեմ հայրիկի  
հովանոցը և կերթամ ընկերուհուս մօտ (ուզում  
է զնալ):

### ԺԱՆԻԿ.

Հովանոցը իմն է: Զը համարձակւես ձեռք  
տալ: Զեմ թողնի (երկուսն էլ վազում են դէպի  
նախասենեակը: Բեմը մի ռոպէ դատարկ է մնում  
նախասենեակից կուի ծայներ են լսում, Թագուշ  
ներս է վազում հովանոցը ձեռքին, ժանիկը աշ-  
խատում է նրանից իլել):

## ՏԵՍԱԲԱՆ

ԹԱԳՈՒԻՇ ԵՒ ԺԱՆԻԿ

### ԹԱԳՈՒԻՇ (հովանոցը քաշքշելով)

Թող, ասում եմ, մօրաքրոջը կը կանչեմ:  
ԺԱՆԻԿ

Զեմ տայ: Շատ եմ վախենում մօրաքրոջից:

### ԹԱԳՈՒԻՇ

Որ սպանես, չեմ տայ:

### ԺԱՆԻԿ

Տեսնեք, ի՞նչպէս չեմ տայ: (Յանկարծ հո-  
վանոցը կոտրում է):

### ԹԱԳՈՒԻՇ (քաց թողնելով).

Ահա հօ կոտրեցիր, կոտրեցիր:

ԺԱՆԻԿ (Նրա կողմը շպրտելով):

Չէ, դու կոտրեցիր, դու: Ի՞նչո՞ւ էիր քաշ-  
քում:

### ԹԱԳՈՒԻՇ.

Սպասիր, հայրիկին ասեմ:  
ԺԱՆԻԿ.

Ես էլ կասեմ, որ դու էիր, դու: Խաբարբզան,  
խաբարբզան:

### ԹԱԳՈՒԻՇ.

Ե՞ս եմ խաբարբզան, (վերցնում է կոտրած  
հովանոցը, ուզում է խփել ժանիկին: Ժանիկը  
փախչում է): Այ քեզ, այ քեզ:

### ԺԱՆԻԿ (բզզգելով նրան):

Ի՞ւ, ի՞ւ խաբարբզան:

ԹԱԳՈՒԻՇ (կանգնելով եւ շպրտելով հովանոցը).

Որ այդպէս է, ես էլ կերթամ, քո ջրգ-  
րու մայրիկի պահարանը բաց կանեմ ու նրա  
նոր կարմիր հովանոցը կը վերցնեմ:

### ԺԱՆԻԿ.

Ես էլ քո ջրըու կը հրամայեմ որ մեր ձին  
թամքեն ու ձիով զբօնելու կերթամ:

### ԹԱԳՈՒԻՇ.

Մեր ձին այդի գնալու համար է: Հայրիկը քեզ  
թողնում է հեծնել և միայն մեր բակում ման դալ:  
ԺԱՆԻԿ

Այսօր ինչ որ ուզում եմ, անում եմ:

### ԹԱԳՈՒԻՇ.

Շատ հարկաւոր է, արա (զնում է ողորս):

(ՏԵՍԱՐԻԱՆ ՎԻ)

ԺԱՆԻԿԻ, յետոյ ՄԱՐԻԱՄ եւ ապա ՀԻԼԻԿ

ԺԱՆԻԿԻ.

**Մարիամ, Մարիամ:** (Մի փոքր սպասելուց  
յետոյ, աւելի բարձր ճայնով) **Մարիամ,** խլացել  
ես, ի՞նչ է:

**ՄԱՐԻԱՄ** (արագ ներս վազելով, թելքերը կշտած,  
ձեռքերը խմորի մէջ)

ի՞նչ է, ի՞նչ. կը առ չի ընկել:  
ԺԱՆԻԿԻ (անհամքեր)

ի՞նչու հէսց որ կանչում եմ, չես գալիս:

ՄԱՐԻԱՄ.

Եաղուի համար խմոր էի ճունցում, զէ  
որ այսօր երեք ճաշ պիտի պատրաստեմ:  
ԺԱՆԻԿԻ

Վազիր իսկոյն, Գէորգին ասա, որ մեր ձին  
թամքի. պիտի փողոց գնամ:  
ՄԱՐԻԱՄ.

Ի՞նչ, այս ցեխի՞ն: Զին հօ ցեխի մէջ կը  
խրչի և դուրս չի գայ:  
ԺԱՆԻԿԻ.

Ամեն բանի մէջ քիթդ մի կոխի: Արա  
ինչպէս հրամայում եմ:

ՄԱՐԻԱՄ.

Շատ բարի (ուզում է զնալ, տեսնում է ներս  
մտնող Լիլիկին, որը հազել է ամենանոր զգեստը,  
զեղեցիկ զինարկ եւ նոր ոտնամաններ. տիկնիկը  
ձեռքին է): Այս էլ ի՞նչ է:

ԼԻԼԻԿ.

Զբոնելու եմ գնում:

ՄԱՐԻԱՄ.

Բայց չէ որ այսօր անձրև է գալիս, սաս-  
տիկ ցեխ է:

ԼԻԼԻԿ.

Իմ բանս ես եմ իմանում: (Մարիամը զը-  
նում է):

ԺԱՆԻԿԻ.

Բայց ամենանոր շորդ և ամենագեղեցիկ  
զինարկը ու կօշիկներդ այս եղանակին չէ որ  
կը փշացնես:

ԼԻԼԻԿ.

Քո բանը չէ: Մայրիկը այս շորս կողպում  
է այնպէս, կարծես մի ոսկի լինի. ես էլ այսօր  
իմ ազատութիւնից եմ ուզում օգտւել և այս  
շորս եմ հագնում: Յտեսութիւն:

ԺԱՆԻԿԻ (ուզում է առաջը կտրել):

Իսկ ես չեմ թողնի:

ԼԻԼԻԿ.

Զես թողնի: Քեզ ով է հարցնում: Այսօր  
ես ազատ եմ և ինքնազուխ (կուրս է վազում):

ԺԱՆԻԿԻ.

Ի՞նչ կասի մայրիկը: Աւելի լաւ կը լինէր  
որ ամենքիս չը տային ազատութիւն. չէ որ Լի-  
լիկը չի հասկանում թէ ինչ կարելի է անել և  
ի՞նչ չի կարելի: Այ, եթէ ամբողջ իշխանութիւ-  
նը միայն ինձ տային... Բոլորովին ուրիշ բան

կը լինէք: (մտնում է Թագուշը, լաւ հազնած եւ մայրիկի հովանոցը բաց արած):

### ՏԵՍԱՐԱԿՈՒՆԻ VІІІ

ԺԱՆԻԿ, ԹԱԳՈՒՇ, յետոյ ՄԱՐԻԱՄ:

#### ԺԱՆԻԿ.

Բարի ճանապարհ (մի երկու ըռպէ նայում է նըան): Ի՞նչին ես նման: Մի կապիկի:  
ԹԱԳՈՒՇ.

Իսկ դուք քո ձիուդ վրա ի՞նչին կը լինես  
նման: Մի ճանձի:

#### ԺԱՆԻԿ.

Ես հայրիկի բարձր կօշիկները կը հագնեմ:  
ԹԱԳՈՒՇ.

Հայրիկի կօշիկները, հօ պիտով ոսով մէջը  
կը մտնես: Աշխարհի մատով ցոյց տալու կը  
դառնաս:

#### ԺԱՆԻԿ.

Ես գիտեմ թէ ի՞նչ կը դառնամ (դուքս է զնում):  
ԹԱԳՈՒՇ.

Մարիամ, Մարիամ (Մարիամը ներս է մըտնում) Մարիամ չը թողնես որ ժանիկը հայրիկի  
կօշիկները հագնի, հայրիկը կը բարկանայ:  
ՄԱՐԻԱՄ. (սարսափած).

Թագուշ, այդ ի՞նչ ես անում: Մայրիկը  
ամենաթանկապին հովանոցը այս սելաւին ի՞նչ  
ես վերցրել:

#### ԹԱԳՈՒՇ.

Խնդրեմ՝ առանց նկատողութիւնների: Աւելի լաւ է դուք գործիդ նայես: Հաւը մորթել ես:  
ՄԱՐԻԱՄ.

Այս, պիտի մորթեմ:

#### ԹԱԳՈՒՇ.

Մարիամ, Մարիամ ջան, մի թող որ ժանիկը հայրիկի կօշիկները հագնի. նա ինձ միշտ բարկացնում է:

ԺԱՆԻԿ (պլարկով եւ հայրիկի կօշիկներով մըտ-  
րակը ծեղբին):

Ի՞նչ. Մարիամը ինձ պիտի չը թողնի: Ապա  
մէկ փորձի (սպառնում է մտրակով):

ԹԱԳՈՒՇ (վախեցած).

Ես բան չեմ ասել (թագնում է Մարիամի  
ետեւ):

#### ԺԱՆԻԿ:

Վախեցած,

#### ՄԱՐԻԱՄ.

Ժանիկ, տես, հայրիկի կօշիկները ասիցդ  
ընկնում են, քոնը հագիր:  
ԺԱՆԻԿ (մտրակը խաղացնելով):

Այսօր մենք ենք հրամայում, հասկաննեմ  
ես, մենք: Զին պատրամատ է:

ՄԱՐԻԱՄ (պատուհանից նայում է):

Գէորգը արդէն թամբած գուրս է բերում:

#### ԹԱԳՈՒՇ.

Չեմ ուզում քո ձի հեծնելդ տեմնեմ: Ամա-  
չեցնելու ես մեզ, էլ ոչինչ, ցնդուս: (Ծտապով

զուրս է զնում՝ հովանոցը բաց առած):

**ԺԱՆԻԿ** (աշխատելով ետեփց համեմել):

Ի՞նչ, ի՞նչ: Առա մէկ էլի կրկնիք. կրկնիք էլի  
(դռան շէմքին քիչ է մնում ընկնի. զուրս է զնում):

### ՄԱՐԻԱՄ.

Տէր Աստւած, երանի երբ պիտի աղատւեմ  
այս գժոխքից:

Վարագոյն

### ԱՐՄԵՒԱԺ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն սենեակը: Լիլիկի թրջւած գլխարկն և տիկնիկը  
ընկած են տախտի վրա:

ՏԵՍԱՐԱԿԻ.

Լիլիկ, ԹԱԳՈՒՇ եւ վերջը ԺԱՆԻԿ.

**Լիլիկ** (շորերը թրջւած են, ոտնամանը ցեխուա):

Ահ, այս անձրել, անձրել: Զը թողեց որ  
զբօնեմ: Եւ այնպէս ուտել եմ ուզում: Արդէն  
ժամի երեքն է: Սովորաբար այս ժամին ենք  
ճաշում: Գնամ, պահարանից ինձ համար ընկուզի  
մուրաբա հանեմ: (ուզում է զնալ, մտնում է Թա-  
գուշը յուսահատսած): Վայ, այդ ի՞նչ է:

ԹԱԳՈՒՇ.

Սասափկ անձրէ էր գալիս, մայրիկի արկի  
նոր հովանոցը բոլորովին թաց եղաւ:

Լիլիկ.

Իսկ ցելսը մրտեղից է:

### ԹԱԳՈՒՇ.

Անպիտան ժանիկը ձին մօտիցա քշեց, ամ-  
բողջ հովանոցը ցեխուեց: Հիմա մայրիկը ի՞նչ  
կասի: (Յուսահատսած նստում է): Իսկ դու, այդ  
ի՞նչ ես գառել:

**Լիլիկ** (լիեղծ հանգստովթեամբ):

Ոչինչ, շորս կը լւացւի, իսկ կօշիկներս Մա-  
րիամը կը սրբի: (Մտնում է ժանիկը, առանց  
մէկ կօշիկի. իսկ մ'իս կօշիկն էլ սաստիկ ցեխու-  
սած, նոյնպէս եւ զլսարկն ու շորերը):

ԹԱԳՈՒՇ և Լիլիկ.

Ահ, ժանիկ, այդ ի՞նչ ես գառել:

**ԺԱՆԻԿ** (յուսահատսած ընկնում է աթոռի վրա).

Լաւ պրծայ, բայց հատ կօշիկս, հատ կօ-  
շիկս... կորաւ, ձիս էլ փախստ ու մենակ տուն  
եկաւ: Հիմա ես ի՞նչ պիտի անեմ: (Ծածկում է  
երեսը ձեռքերով եւ սկսում է լաց լինել. քոյրերը  
աշխատում են նրան մ'իմթարել):

Լիլիկ.

Զին քեզ վայր գցեց:

**ԺԱՆԻԿ** (զլսով դռական նշան անելով):

Եյի:

### ԹԱԳՈՒՇ.

Իսկ կօշիկդ մաիցդ ընկաւ:

ԺԱՆԻԿ.

Նու այնպէս վագեց, որ ոսու ասպանդակից  
դուրս պրծաւ և կօշիկս հանւեց:

Լիլիկ.

Կը կանգնեցնէլիք ու կը վերցնէիք կօշիկը:

**ԺԱՆԻԿ.**

Զը կարողացայ, հեռու տարաւ, և ես վայր  
ընկած:

**ԹԱԳՈՒՇ.**

Տէր Աստւած, Տէր Աստւած, հիմա ի՞նչ ա-  
նենք (մտնում է Մարիամը):

**ՏԵՍԱՐԱՆ II.**

ՆՈՅՆԵՐԸ եւ ՄԱՐԻԱՄԸ

**ՄԱՐԻԱՄ.**

Ճաշի համար իւղ և շաքար է հարկաւոր:  
Լիլիկ.

Ի՞նչ, ճաշ գեռ պատրաստ չէ:  
ՄԱՐԻԱՄ.

Դուք դնացիք և ոչինչ չը աւիք ճաշի համար:  
ԹԱԳՈՒՇ (բարկացած):

Կարող էիր ինքով վերցնել:  
ՄԱՐԻԱՄ.

Զը գիտէի որ հրամանքով թոյլ կը տոք:  
Լիլիկ (լալկան ծայնով).

Ապա ուրեմն ճաշը ե՞րբ կը լինի պատրաստ:  
ՄԱՐԻԱՄ.

Գուցէ երկու, կամ երեք ժամից յետոյ:  
ԹԱԳՈՒՇ և Լիլիկ.

Բայց մենք ուտել ենք ուզում:  
ՄԱՐԻԱՄ.

Ես ի՞նչ անեմ: Իւղն ու շաքարը աւէք:  
ԹԱԳՈՒՇ (անհամբերովթեամբ).

Գնա, ինքով բանալիքը վերցրու. սեղանի վրա  
է ընկած:  
**ՄԱՐԻԱՄ.**

Շատ բարի (զուրս է զնում):

Լիլիկ (տախտի վրա ընկնելով).

Այսպէս էլ անբախտութիւն. ես սաստիկ  
քաղցած եմ և մրսում եմ:

**ԺԱՆԻԿ.**

Հայրիկը հիմա ի՞նչ կասի:  
ԹԱԳՈՒՇ.

Մայրիկի հովանոցը ի՞նչպէս սրբեմ:

**ՏԵՍԱՐԱՆ III.**

ՆՈՅՆԵՐԸ եւ ԱԽԱԼԵՆ (Հատում է զուն թրիկթըն-  
կոց):

Լիլիկ և ԹԱԳՈՒՇ.

Մոէք: Ո՞վ է:  
ԱՆԱ (զուն ետևից):

Կարելի՞ է:  
Լիլիկ (ուրախ).

Ահնա մօրաքոյրն է (վազում է զէպի դուռը  
եւ բաց անում): Ի՞նչ լաւ եղաւ, մօրաքոյր, որ  
եկար:

ԱՆԱ (հազնած. զիսարկը զիսին. առանց երե-  
խաների վրա նայելու):

Եկայ ձեզ մնաս բարի ասելու:  
ԵՐԵԿԻԱՆԵՐԸ (սարսափած):

Դու գնո՞ւմ ես:

այս իմարձն ԱՆԱ. անունով բգմի ամք

Այս. այստեղ ես էլ գործ չունեմ: Դուք  
ինքներդ շատ հիանալի կառավարում էք այստեղ,  
իսկ ես մեր տանը հարկաւոր եմ:  
ԵՐԵԽԱՆԵՐԸ.

Ա՛ս, մօրաքոյր: ԱՆԱ. այս ճապաց

Ասելու բան ունէք:  
Լիլիկ (զբկելով նրան).

Մի գնայ: Ես նորից կուզէի լսել, ոչ թէ  
հրամայել:

ԱՆԱ.

Ի՞նչ, երեկի հանաք ես անում:  
ԹԱԳՈՒՇ (ցածր).

Ո՞չ, կլիկը հանաք չի անում:  
ԺԱՆԻԿ (նոյնպէս).

Այս, մօրաքոյր:

ԱՆԱ.

Էհ, երեխաներ, երեխաներ: Մի երկու ժամ  
առաջ ի՞նչպէս էիք մեծերից գանգատում և  
ի՞նչեր էիք ասում, որ ստիպւած էք նըանց միշտ  
հնազանդւելու:

ԺԱՆԻԿ (ընդհատելով).

Այս երկու ժամում շատ բան փոխւեց:  
Լիլիկ.

Ոհ, շատ բան: Ի՞րար հետ կուռմ էինք,  
Թագուշը մայրիկի հովանոցն է փչացրել, Ժա-  
նիկը հայրիկի կօշիկն է կորցրել, ես էլ այնպէս

քաղցած եմ. ճաշը միայն երեք ժամից պատ-  
րաստ կըլինի:

ԱՆԱ.

Բայց չէ որ դուք ազատութիւն էիք ուզում:  
ԺԱՆԻԿ.

Մեղ թւում էր թէ աւելի հեշտ է հրամա-  
յել, քան թէ լսել:

ԹԱԳՈՒՇ.

Ահ, մօրաքոյր, ի՞նչ դժւար է եղել հրա-  
մայել:

Լիլիկ և ԺԱՆԻԿ (համոզւած ծայնով).

Մենք դեռ չենք սովորել հրամայել:

ԱՆԱ. (քնքութեամբ).

Այս, իմ փոքրիկներ, պէտք է հրամայել էլ  
սովորել, ինչպէս որ դեռ պէտք է լսել սովորել:  
Ով լսել չը դիտի, նա հրամայել էլ չի սովորի:  
Իսկ հիմա, քանի որ ինքներդ էք ուզում, վեր-  
ջանում է ձեր ազատութիւնը:  
Լիլիկ.

Կեցցէ, մօրաքոյր:

ԺԱՆԻԿ (ծգելով եւ պատիւ տալով զինողի պէս):

Պատրաստ եմ ծառայելու ձեր հրամանին,  
ձեր գերազանցութիւն:

ԹԱԳՈՒՇ.

Ակսոն մեր թագաւորութիւնը: (Ծրջապա-  
տսմ են մօրաքը ջը):

Վարագոյր

առողջ պահի գործ մշտի պահ և ճայրաց  
առողջ պահի գործ մշտի պահ և ճայրաց

առողջ պահի գործ մշտի պահ և ճայրաց  
առողջ պահի գործ մշտի պահ և ճայրաց

առողջ պահի գործ մշտի պահ և ճայրաց

առողջ պահի գործ մշտի պահ և ճայրաց  
առողջ պահի գործ մշտի պահ և ճայրաց  
առողջ պահի գործ մշտի պահ և ճայրաց  
առողջ պահի գործ մշտի պահ և ճայրաց  
առողջ պահի գործ մշտի պահ և ճայրաց

**Պահմըսոցիկ . . . . . 3 երես**

**Աղասութիւն (քովանդակութիւնը փոխ է առած  
լիներէնից) . . . . . 9 \***

այս պահութիւնը պահանջութիւնը պահ  
այս պահութիւնը պահանջութիւնը պահ

այս պահութիւնը պահանջութիւնը պահ  
այս պահութիւնը պահանջութիւնը պահ  
այս պահութիւնը պահանջութիւնը պահ

այս պահութիւնը պահանջութիւնը պահ  
այս պահութիւնը պահանջութիւնը պահ

այս պահութիւնը պահանջութիւնը պահ  
այս պահութիւնը պահանջութիւնը պահ

այս պահութիւնը պահանջութիւնը պահ  
այս պահութիւնը պահանջութիւնը պահ



9475

Գի՞նը 5 կօղ.

Պահեստը՝ Թիֆլիս «Գի՛ր» գրախանութում: